



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2020 թվականի հոկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումը:

2020 թվականի սեպտեմբերի 30-ի «Քրեական գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ թիվ ՇԴ3/0002/01/17 քրեական գործով կիրառման ենթակա Քրեական դատավարության օրենսգրքի դրույթների սահմանադրականությունը որոշելու համար:

Դիմողը գտնում է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները՝ այնքանով, որքանով չեն նախատեսում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործով տուժողի կողմից իրեն վնաս պատճառած ենթադրյալ արարքի հանգամանքներն ամբողջական չբացահայտելը և քննիչի/դատախազի կողմից դրան մեղմ քրեաիրավական որակում տալը դատարանում վիճարկելու անհրաժեշտ

կազմակերպական կառուցակարգ, առերևույթ հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածների պահանջներին»:

2. Դիմողը, ըստ էության, բարձրացնում է իրավական բացի խնդիր, նշելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պետք է տուժողի համար հնարավորություն սահմանի դատական պաշտպանություն հայցել այն դեպքում, երբ իրավասու մարմինների կողմից չի կատարվում վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտում կամ դրան չի տրվում ճիշտ քրեաիրավական որակում:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները, և առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրվել է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ վերոհիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

Հարկ է նշել նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարանի դիմելու ընդհանուր իրավակարգավորումները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարանի դիմող բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ դատարանների համար: Հիշյալ գլխով կանոնակարգ-

վում են նաև գործի քննությունը մերժելու (29-րդ հոդված) հետ կապված հարցերը:

Օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, ի թիվս այլ հիմքերի՝ եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան (2-րդ կետ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սահմանափակվել է Քրեական դատավարության օրենսգրքի դրույթների ընդհանուր վկայակոչմամբ և դիմումի վերջնարդյունքում չի բարձրացրել վերոհիշյալ սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակներում Քրեական դատավարության օրենսգրքի կոնկրետ դրույթների սահմանադրականությունը որոշելու խնդիր:

Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

«ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 նոյեմբերի 2020 թվականի  
ՍԴԱՈ-212